ՏԵՂԵԿԱՆՔ

Ազգային ժողովի ֆինանսավարկային եւ բյուջետայի հարցերի մշտական հանձնաժողովի 8-րդ գումարման 3-րդ նստաշրջանի ընթացքում կատարած աշխատանքներիվերաբերյալ

1. **Կայացած նիստերի քանակը կազմել է 39 - ը՝ 3 հերթական, 18 արտահերթ, 13՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների հետ համատեղ նիստեր («Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարման մասին» տարեկան հաշվետվության նախնական քննարկումների) և 5 համատեղ նիստ Հաշվեքննիչ պալատի եզրակացությունների քննարկումների:**

2. **Հանձնաժողովը գլխադասային է նշանակվել՝ 25 օրենքի նախագծի (որոնցից՝ 4 օրենքների նախագծերի փաթեթ)՝ ընդունվել են ամբողջությամբ՝ 22, դուրս է եկել շրջանառությունից՝ 0, դեռեւս չեն ընդգրկվել օրակարգում՝ 3 , ընդգրկվել են օրակարգում՝ 0:**

3. **Նիստերի ընթացքում քննարկվել են՝**

3.1. **Օրենքների նախագծեր՝ թվով 22՝**

բոլորը ընդունվել են ամբողջությամբ՝

1. «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին **Պ-052-28.09.2021,09.11.2021-ՖՎ-011/2ամբ.**
   Հեղինակ՝ Գեւորգ Պապոյան

2. Անկանխիկ գործառնությունների մասին **Կ-061-08.10.2021-ՖՎ-011/2ամբ.**
   Հեղինակ՝ ՀՀ կառավարություն

3. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին **Կ-0611-08.10.2021-ՖՎ-011/2ամբ.**
   Հեղինակ՝ ՀՀ կառավարություն

4. Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին **Կ-0612-08.10.2021-ՖՎ-011/2ամբ.**
   Հեղինակ՝ ՀՀ կառավարություն

5. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում եւ փոփոխություններ կատարելու մասին **Կ-0613-08.10.2021-ՖՎ-011/2ամբ.**
   Հեղինակ՝ ՀՀ կառավարություն

6. «Արժութային կարգավորման եւ արժութային վերահսկողության մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին **Կ-0614-08.10.2021-ՖՎ-011/2ամբ.**
   Հեղինակ՝ ՀՀ կառավարություն

7. «Գրավատների եւ գրավատնային գործունեության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին **Կ-0615-08.10.2021-ՖՎ-011/2ամբ.**
Հեղինակ՝ ՀՀ կառավարություն

8. «Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին **Կ-0616-08.10.2021-ՖՎ-011/2ամբ.**
Հեղինակ՝ ՀՀ կառավարություն

9. «Նոտարիատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին **Կ-0617-08.10.2021-ՖՎ-011/2ամբ**
Հեղինակ՝ ՀՀ կառավարություն

10. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին **Կ-0618-08.10.2021-ՖՎ-011/2ամբ.**
Հեղինակ՝ ՀՀ կառավարություն

11. «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին **Կ-150-31.01.2022,15.03.2022-ՖՎ-011/2ամբ.**
Հեղինակ՝ ՀՀ կառավարություն

12. «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին **Պ-1801-02.03.2022,11.04.2022-ՖՎ-011/2ամբ.**
Հեղինակներ՝ Գեւորգ Պապոյան, Ծովինար Վարդանյան

13. «Վիճակախաղերի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին **Պ-1801-02.03.2022,11.04.2022-ՖՎ-011/2ամբ.**
Հեղինակներ՝ Գեւորգ Պապոյան, Ծովինար Վարդանյան

14. «Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքում լրացում եւ փոփոխություններ կատարելու մասին
Կ-290-03.06.2022-ՖՎ-011/2ամբ.
Հեղինակ՝ ՀՀ կառավարություն

15. Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվություն
Կ-251-29.04.2022-ՖՎ-012/0
Հեղինակ՝ ՀՀ կառավարություն

16. «Հայաստանի Հանրապետության ու Արժույթի միջազգային հիմնադրամի միջեւ 2022 թվականի հունվարի 11-ին եւ հունվարի 18-ին ստորագրված «Պահուստային ծրագրի միջոցների օգտագործման մասին» նամակ-համաձայնագիրը վավերացնելու մասին **Կ-181-02.03.2022-ՖՎ-011/0**
Հեղինակ՝ ՀՀ կառավարություն

17. Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի միջեւ 2021 թվականի նոյեմբերի 24-ին ստորագրված «Երեւանի ավտոբուսների ծրագիր» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին
Կ-182-03.03.2022-ՖՎ-011/0
Հեղինակ՝ ՀՀ կառավարություն

18. «Հայաստանի Հանրապետության, «Երեւանի ավտոբուս» փակ բաժնետիրական

ընկերության ու Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի միջեւ 2021 թվականի նոյեմբերի 24-ին ստորագրված «Երեւանի ավտոբուսների ծրագիր» դրամաշնորհային համաձայնագիրը վավերացնելու մասին
Կ-183-03.03.2022-ՖՎ-011/0
Հեղինակ՝ ՀՀ կառավարություն

19. «Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջեւ 2020 թվականի ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին
Կ-199-15.03.2022-ՖՎ-011/0
Հեղինակ՝ ՀՀ կառավարություն

20. «Թանկարժեք մետաղների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին Կ-299-13.06.2022-ՖՎ-011/2ամբ.
Հեղինակ՝ ՀՀ կառավարություն

21. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին
Կ-2991-13.06.2022-ՖՎ-011/2ամբ.
Հեղինակ՝ ՀՀ կառավարություն

22. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին
Կ-2992-13.06.2022-ՖՎ-011/2ամբ.
Հեղինակ՝ ՀՀ կառավարություն

3.2. Տեղեկանքներ /թվով 3/.

1) 2022 թվականի պետական բյուջեի առաջին եռամսյակի կատարման ընթացքի վերաբերյալ:
2) Բյուջետային գրասենյակի 2021 թվականի տարեկան հաշվետվությունը՝ կատարած աշխատանքների վերաբերյալ:
3) Բյուջետային գրասենյակի հաշվետվությունը՝ 2022 թվականի առաջին եռամսյակում կատարած աշխատանքների վերաբերյալ:

3.3 **Հաղորդումներ /թվով 3/ և Զեկույց /թվով 1/**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 28-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի (2021-2026 թթ.) 2021 թվականի կատարման ընթացքի եւ արդյունքների զեկույցի մասին» N 234-Ա որոշմամբ հավանության արժանացած զեկույցը
2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդում
3. ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդում

3.4 **Հանձնաժողովի որոշումներ /թվով 4/.**

1. Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 115-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Ազգային ժողովի ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը որոշում է.

- Հրավիրել համատեղ նիստեր՝ ԱԺ Առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի և Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության հարցերի մշտական հանձնաժողովի հետ՝ համապատասխան օրակարգերով:
- Հրավիրել համատեղ նիստ՝ ԱԺ Առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի հետ՝ ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ՀՀ հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացության քննարկում:
- Հրավիրել համատեղ նիստեր՝ ԱԺ Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության հարցերի մշտական հանձնաժողովի հետ՝ համապատասխան օրակարգերով:
- Հրավիրել համատեղ նիստ՝ ԱԺ Առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի հետ՝ կորոնավիրուսային համավարակով պայմանավորված բյուջետային ծախսերի հաշվեքննության արդյունքների վերաբերյալ:

3.5 **«Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարման մասին» տարեկան հաշվետվության քննարկում համատեղ նիստերում /թվով 13 նիստ/ (Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների հետ համատեղ նախնական քննարկումների կազմակերպում և իրականացում):**

3.6 «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 145-րդ հոդվածի համաձայն՝

1) Հայաստանի Հանրապետության Հաշվեքննիչ պալատի նախագահի թեկնածության և Ազգային ժողովին այդ պաշտոնին թեկնածու առաջարկելու վերաբերյալ քննարկում (Հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության Հաշվեքննիչ պալատի նախագահի թափուր տեղի համար Ազգային ժողովին առաջարկեց "Քաղաքացիական պայմանագիր" խմբակցության կողմից առաջադրված **Ատոմ Սավկայի Ջանջուղազյանի** թեկնածությունը),

2) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի տեղակալի թեկնածության և Ազգային ժողովին այդ պաշտոնին թեկնածու առաջարկելու վերաբերյալ քննարկում (Հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի նախագահի տեղակալի տեղի համար Ազգային ժողովին առաջարկեց " Քաղաքացիական պայմանագիր " խմբակցության կողմից առաջադրված **Հովհաննես Վահանի Խաչատրյանի** թեկնածությունը),

3) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի անդամի

թեկնածության և Ազգային ժողովին այդ պաշտոնին թեկնածու առաջարկելու վերաբերյալ քննարկում (Հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի խորհրդի անդամի տեղի համար Ազգային ժողովին առաջարկեց " Քաղաքացիական պայմանագիր " խմբակցության կողմից առաջադրված **Լևոն Սահակի Սահակյանի** թեկնածությունը):

3.7 **«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 115-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն կայացել են հինգ համատեղ նիստ՝ հետևյալ օրակարգերով՝**

- 15. 03. 2022թ-ին, ժամը 10:00-ին ԱԺ Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի և ԱԺ Առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ՝ ՀՀ հաշվեքննիչ պալատի Առողջապահության նախարարությունում ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացության քննարկում,

- 15. 03 2022թ-ին, ժամը 11:30-ին ԱԺ Ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի և ԱԺ Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ՝ ՀՀ հաշվեքննիչ պալատի Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեում ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացության քննարկում,

- 25.03.2022 ժամը 12:30 Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի և Առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ Աառողջապահության նախարարությունում ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ՀՀ հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացության քննարկում,

- 18. 05. 2022թ-ին, ժամը 10:00-ին Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի և ԱԺ Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ՝ ՀՀ հաշվեքննիչ պալատի Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման վարկային և դրամաշնորհային ծրագրերի հաշվեքննության վերաբերյալ ընթացիկ եզրակացության

քննարկում,

- 0.06.2022 ժամը 10:00 Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի և Առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ՝ Առողջապահության նախարարությունում նոր կորոնավիրուսային համավարակով (covid-19) պայմանավորված բյուջետային ծախսերի հաշվեքննության արդյունքների վերաբերյալ» Հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացության քննարկում:

4. **Հանձնաժողովի 2021 թվականի սեպտեմբերի 17-ի նիստում ընդունած որոշման համաձայն (ինչը վերաբերվում է քաղաքացիների 2021-2022 թվականների ընդունելության տարեկան ժամանակացույցի հաստատմանը)՝ 3-րդ նստաշրջանի ընթացքում հանձնաժողովը ունեցել է 5 ընդունելություն, թվով 17 քաղաքացիների համար: Հանձնաժողովի և նրա նախագահի հասցեով քաղաքացիներից և կազմակերպություններից ստացվել են թվով 22 դիմում – նամակներ:**